ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2900-Ա « 09» հունիսի 2026թ.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ, ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և «բ» պարբերությունների, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի պահանջները, ինչպես նաև ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով.

1. Երևան քաղաքի Բաբաջանյան-Աշտարակի խճուղի ճանապարհային հատվածի մինչև 270 մետր (կմ 1 + 820 մինչև կմ 1 + 980՝ գումարած 110 մ մոտեցնող ճանապարհներ) անավարտ հատվածի կառուցման նպատակով շինարարական աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով՝ ստեղծել մասնագիտական խումբ և հաստատել խմբի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սույն որոշման 1-ին կետով նախատեսված աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման մասով գնումների իրականացման պատասխանատու ստորաբաժանում սահմանել սույն որոշման 1-ին կետով ստեղծված մասնագիտական խմբին:

3. Գնումների համակարգման գործառույթը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչությանը:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումը և պատասխանատվությունը վերապահել «ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի տնօրենին:

5. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
09.06.2026 թ.
N 2900-Ա որոշման

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Վարդգես Հարությունյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի ճանապարհային ենթակառուցվածքների ծրագրերի ղեկավար /մասնագիտական խմբի ղեկավար/

Մասնագիտական խմբի անդամներ

Արամ Պետրոսյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի քաղաքային զարգացման ծրագրի համակարգող
Շողիկ Երանյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի սոցիալական կառավարման և տարաբնակեցման ղեկավար
Լուսինե Բադալյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի» իրավաբան
Մարիաննա Եղիազարյան	«ԵԿՆ ԾԻԳ» ՀՈԱԿ-ի քաղաքային զարգացման ծրագրի գլխավոր ֆինանսիստ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**